



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 41495 գործարքներ, որոնց քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 18.3%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 15.2%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14512 օտարման գործարքների 82.5% կազմել են առուվաճառքները, 16.0%՝ նվիրատվությունները և 1.5%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.9% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.7% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. երկրորդ եռամսյակում, 2008թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 16.1%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 4.5%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 58.5% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.5%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 17.0%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ եռամսյակ 2007թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2008թ.
Կենտրոն	449400	478600	472400
Արաբկիր	360600	414900	387600
Քանաքեռ-Զեյթուն	261700	307900	298200
Նոր-Նորք	224300	276100	259000
Ավան	209400	270100	259400
Էրեբունի	217300	273500	260000
Շենգավիթ	235500	279500	269200
Դավթաշեն	239900	289500	276900
Աջափնյակ	229500	280400	264500
Մալաթիա-Սեբաստիա	216900	265300	255500
Նուբարաշեն	122300	152800	145400
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>251500</b>	<b>299000</b>	<b>286200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 4.5%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն, համապատասխանաբար, նվազման և կայունացման միտում:

2008թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1341 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 7.0%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 8.5%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2007թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	102300	127200	115300
	Ապարան	28600	33300	31400
	Թալին	35700	42900	40600
Արարատ	Արտաշատ	81600	95800	91500
	Մասիս	88700	128700	119800
	Վեդի	57700	79400	76000
	Արարատ	55400	59700	58700
Արմավիր	Վաղարշապատ	123900	164800	154500
	Արմավիր	86600	117300	112900
	Մեծամոր	56500	78700	72100
Գեղարքունիք	Սևան	58500	89600	79600
	Գավառ	33900	45900	42400
	Մարտունի	49400	68400	63900
	Վարդենիս	26200	31200	29500
	Ճամբարակ	14500	16000	15700
Լոռի	Վանաձոր	69300	90000	82900
	Ստեփանավան	33400	45800	44500
	Մալտակ	44500	61200	59600
	Ալավերդի	24700	30200	28100
	Տաշիր	24000	30900	29300
	Թումանյան	5400	5600	5500
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11600	12800	12700
Կոտայք	Արովյան	140100	173300	158700
	Նոր Հաճն	96200	123100	115100
	Բյուրեղավան	70300	100100	88600
	Եղվարդ	86200	116800	106800
	Հրազդան	48300	67500	60700
	Ծաղկաձոր	90200	145200	136000
	Չարենցավան	58800	90500	79500
Շիրակ	Գյումրի	66500	96100	88100
	Արթիկ	43000	54100	52400
	Մարալիկ	24900	26600	26100
Սյունիք	Գորիս	70000	104700	93000
	Կապան	63100	86700	81700
	Միսիան	50600	71100	64500
	Մեղրի	36500	45900	44500
	Ագարակ	23700	29000	28400
	Քաջարան	31000	47500	42900
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	56300	74800	69900
	Եղեգնաձոր	70300	96100	89600
	Ջերմուկ	102800	123900	121500
Տավուշ	Դիլիջան	63600	89300	82500
	Իջևան	85900	117100	113100
	Բերդ	33000	38500	37500
	Նոյեմբերյան	27800	29900	29600
	Այրում	18000	21100	21000

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 7.0%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն համապատասխանաբար ունեն նվազման և կայունացման միտում:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1584 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 356, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1228: 2008թ. առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 9.5%-ով, ընդ որում, Երևանում՝ 10.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 9.1%-ով: 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.2%-ով, ընդ որում Երևանում՝ 20.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 0.2%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ եռամսյակ 2007թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2008թ.
Կենտրոն	458800	491600	486000
Արաբկիր	364400	420800	396400
Քանաքեռ-Զեյթուն	264500	314700	307400
Նորք-Մարաշ	227800	283600	265800
Ավան	212700	274500	267100
Էրեբունի	222600	275600	265900
Շենգավիթ	237900	281700	273600
Դավթաշեն	245500	295800	288100
Աջափնյակ	234000	285900	270600
Մալաթիա-Սեբաստիա	219800	273400	266300
Նուբարաշեն	125400	158400	150600
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>255800</b>	<b>305100</b>	<b>294300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 3.7 %-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ եռամսյակ 2007թ.	Երկրորդ եռամսյակ 2008թ.	առաջին եռամսյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	104900	129800	118900
	Ապարան	33100	36000	34500
	Թային	38800	45800	43900
Արարատ	Արտաշատ	84300	100700	97500
	Մասիս	91800	131400	123500
	Վեդի	61100	87800	80400
	Արարատ	59400	65300	63900
Արմավիր	Վաղարշապատ	126500	168600	157300
	Արմավիր	89900	122100	116700
Գեղարքունի ք	Սևան	61100	91700	82000
	Գավառ	37700	47700	44900
	Մարտունի	52700	71900	67000
	Վարդենիս	30000	33200	31800
	Ճամբարակ	17300	20000	19300
Լոռի	Վանաձոր	74000	93900	88300
	Ստեփանավան	37700	51400	48900
	Սպիտակ	48800	66000	62900
	Ալավերդի	28800	32300	30600
	Տաշիր	27000	34400	32600
	Թումանյան	8100	9800	9200
	Շամլուղ	5300	6500	6200
	Ախթալա	14100	15800	15600
Կոտայք	Աբովյան	144300	178800	164100
	Նոր Հաճն	102600	127300	120700
	Բյուրեղավան	72800	101900	92000
	Եղվարդ	90000	119600	111500
	Հրազդան	52400	69300	64800
	Ծաղկաձոր	118100	227700	200100
	Չարենցավան	60700	92100	81900
Շիրակ	Գյումրի	70900	98800	93600
	Արթիկ	45500	57700	54600
	Մարալիկ	27500	31000	29800
Սյունիք	Գորիս	72300	107000	95100
	Կապան	65700	90900	85000
	Միսիան	55100	72900	67400
	Մեղրի	39700	49300	48000
	Ագարակ	26700	32100	30700
	Դաստակերտ	9600	10300	10000
Վայոց Ձոր	Վայք	59300	78600	74700
	Եղեգնաձոր	72000	100900	95500
	Ջերմուկ	50700	78700	70600

Տավուշ	Դիլիջան	67300	94500	86900
	Իջևան	87400	123700	115700
	Բերդ	36200	40500	39800
	Նոյեմբերյան	30700	35300	35000
	Այրում	19200	22800	22800

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 7.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5893 միավոր /4719.75 հա/ հողեր, որից Երևանում՝ 417 միավոր /52.34 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 192 միավոր /74.27 հա/ հողեր, որից Երևանում՝ 93 միավոր /17.83 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2463 միավոր /4336.53 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /2.36 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2131 միավոր /198.46 հա/, որից Երևանում՝ 268 միավոր /21.91 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1160 միավոր /105.36 հա/, որից Երևանում՝ 124 միավոր /22.49 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 87 միավոր /61.98 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /5.57 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 39 միավոր /15.18 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 13 միավոր /2.24 հա/:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5497 միավորի /4549.66 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 387 միավոր /48.69 հա/, նվիրատվության գործարքներ՝ 338 միավորի /160.34 հա/, որից Երևանում՝ 18 միավոր /2.60 հա/ և փոխանակության գործարքներ՝ 58 միավորի /9.75 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.05 հա/:

Հանրապետությունում 2008թ. երկրորդ եռամսյակում, 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.8%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 5.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 50.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2051.84 հա, որից 2010.10 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 39.1% կամ 2150 գործարքներ /1532.42 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 116 գործարքներ /18.19 հա/, իսկ 60.7% կամ 3334 միավորը /2999.79 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 270 միավոր /30.50 հա/: 2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք /17.45 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ

մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	9	5.48	44	4.44	63	8.26	15	2.36	1	0.09	203	14.78	51	13.27
Արագածոտն	112	423.72	1	0.02	12	1.63	64	4.19	236	220.39	0	0.00	172	15.27	6	0.17
Արարատ	83	212.65	18	34.08	129	16.89	113	27.40	235	85.13	1	0.01	188	17.40	24	2.07
Արմավիր	46	103.63	13	5.51	11	0.75	113	2.18	342	1906.46	1	0.10	258	22.72	32	10.48
Գեղարքունիք	19	32.20	3	1.06	80	10.73	62	3.48	179	91.10	0	0.00	37	4.99	6	0.75
Լոռի	11	12.79	2	1.01	25	2.17	112	2.13	92	73.02	0	0.00	32	4.40	11	0.85
Կոտայք	187	374.00	12	2.25	129	10.26	164	8.43	414	204.68	0	0.00	403	37.28	33	7.04
Շիրակ	4	7.48	5	2.46	76	3.24	77	3.75	51	133.52	1	0.04	33	2.95	8	0.18
Սյունիք	6	39.55	0	0.00	10	0.86	29	1.55	55	53.84	1	0.01	14	1.18	11	0.19
Վայոց Ձոր	43	94.04	3	0.46	19	2.00	107	1.52	25	18.82	1	0.05	14	1.69	7	1.80
Տավուշ	24	47.75	12	7.69	42	2.70	38	3.50	77	34.58	1	0.06	34	3.31	0	0.00
Հնդանը	535	1347.81	78	60.02	577	55.67	942	66.39	1721	2823.90	7	0.36	1388	125.97	189	36.80

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	82	11.96	9	5.48	25	1.21	48	5.27	34	6.22	0	0.00	0	0.00	19	3.23	15	2.99
Արագածոտն	8	0.24	0	0.00	0	0.00	8	0.24	181	429.32	112	423.72	1	0.02	12	1.63	56	3.95
Արարատ	30	15.65	5	1.02	3	0.08	22	14.55	313	275.36	83	212.65	13	33.06	126	16.81	91	12.84
Արմավիր	42	0.342	3	0.05	1	0.002	38	0.29	141	111.74	46	103.63	10	5.47	10	0.75	75	1.89
Գեղարքունիք	25	3.27	1	0.36	11	1.64	13	1.27	139	44.20	19	32.20	2	0.70	69	9.09	49	2.21
Լոռի	11	1.14	2	1.01	0	0.00	9	0.13	139	16.97	11	12.79	0	0.00	25	2.17	103	2.01
Կոտայք	39	2.70	6	1.35	11	0.32	22	1.03	443	389.71	177	371.47	6	0.90	118	9.94	142	7.40
Շիրակ	31	0.97	2	0.06	15	0.44	14	0.47	131	15.97	4	7.48	3	2.40	61	2.81	63	3.28
Սյունիք	2	0.024	0	0.00	1	0.02	1	0.004	43	41.94	6	39.55	0	0.00	9	0.84	28	1.55
Վայոց Ձոր	9	0.65	3	0.46	0	0.00	6	0.19	163	97.37	43	94.04	0	0.00	19	2.00	101	1.33

Տավուշ	17	5.49	2	4.89	12	0.50	3	0.10	98	56.11	23	47.71	10	2.80	30	2.20	35	3.40
Ընդամենը	296	42.44	33	14.68	79	4.21	184	23.54	1825	1484.91	524	1345.24	45	45.35	498	51.47	758	42.85

Հանրապետությունում 2008թ. երկրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 11 գործարքներ /2.57 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. երկրորդ եռամսյակում, 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.9%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 20.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 3.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 21.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 41.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 11.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 40.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեր /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեր /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	103	399.65	33.9	851.3	154.7	163	122.07	365.0	12000.0	3253.7
Ապարան	1	0.06	3573.3	3573.3	3573.3	19	22.52	86.5	2727.3	424.3
Թալին	8	24.01	34.4	625.6	149.5	29	54.99	93.6	5494.5	451.4
Ծաղկահովիտ						20	18.91	79.5	1000.0	192.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	22	31.33	57.4	2306.7	898.8	114	31.29	335.1	10833.3	1719.1
Մասիս	26	49.18	27.2	2310.0	692.5	57	18.69	200.0	11904.8	2155.8
Վեդի	35	132.13	30.0	9364.6	747.4	62	34.19	207.0	10795.1	1499.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	19	69.68	31.4	3181.8	390.5	103	82.23	294.3	9090.0	1092.7
Բաղրամյան	7	9.02	35.4	39.4	36.3	62	1666.47	90.6	2561.1	639.8
Վաղարշապատ	20	24.93	31.6	3610.0	1088.6	153	145.79	444.4	11764.7	1947.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						89	31.76	199.8	1875.0	412.3
Ճամբարակ	10	11.65	99.3	3475.7	851.1	55	19.83	60.5	953.3	174.4
Մարտունի	1	0.10	1126.0	1126.0	1126.0	10	2.24	51.1	2850.0	498.7
Սևան	2	8.20	218.3	1221.0	719.7			52.2	2134.8	210.1
Վարդենիս	6	12.25	66.0	552.8	258.2	25	37.27	41.2	2575.1	286.6
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	3	8.21	215.4	229.4	223.7	28	12.69	170.4	6424.2	1142.8
Գուգարք	4	1.09	93.4	700.0	245.2	18	8.15	234.6	6065.9	979.7
Սպիտակ	4	3.49	229.0	271.9	251.3	1	0.07	250.0	5555.5	541.1
Ստեփանավան						26	20.92	90.6	1686.6	398.2
Տաշիր						19	31.19	45.3	1384.4	217.5



Կոտայքի մարզ										
Աբովյան	121	292.46	35.3	2418.6	433.1	184	64.94	279.3	11942.7	3945.5
Եղվարդ	43	65.11	38.8	2950.8	348.4	170	83.14	174.4	11971.8	2756.9
Հրազդան	13	13.90	46.0	1910.0	539.1	55	53.26	130.5	10256.4	1118.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.00	294.8	294.8	294.8	22	18.62	252.0	1693.1	477.1
Ամասիա	1	4.48	223.2	223.2	223.2	3	80.49	40.9	261.0	120.0
Անի						21	23.05	110.6	546.9	271.9
Աշոցք	1	1.00	304.0	304.0	304.0	2	5.00	58.5	215.8	119.1
Արթիկ	1	1.00	157.5	157.5	157.5	2	0.54	79.4	1428.6	185.9
Սյունիքի մարզ										
Գորիս						22	31.23	92.6	1023.2	378.5
Կապան	4	37.55	306.4	1135.8	653.4	8	10.77	120.0	841.6	247.6
Մեղրի						15	2.32	193.0	3000.0	549.4
Սիսիան	2	2.00	451.5	687.5	569.5	9	9.51	46.3	1977.4	266.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	34	15.89	33.3	1966.5	423.6	8	3.02	125.0	10000.0	1348.6
Վայք	9	78.15	46.1	192.5	57.2	17	15.80	58.8	1430.7	524.2
Տավուշի մարզ										
Բերդ	5	1.53	147.1	5250.0	966.7	30	8.47	213.3	3783.8	392.3
Իջևան	14	37.69	45.8	9200.0	1743.5	14	9.95	267.5	9454.5	860.4
Նոյեմբերյան	4	8.50	525.0	735.0	695.0	33	16.16	46.7	7368.4	590.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	6325.0	172.2	174.1	173.3	156	123783.0	130.7	22200.0	2545.9
Ապարան	5	5152.0	125.0	127.2	126.5	6	7780.0	124.1	609.6	211.5
Թալին						4	8200.0	63.2	1454.8	107.0
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8	6	12953.0	60.0	214.3	72.3
Արարատի մարզ										
Արտաշատ	93	100108.9	150.0	460.6	310.7	55	56539.0	173.9	7140.3	923.8
Մասիս	27	62370.0	266.7	1817.2	1114.1	90	73960.0	187.5	25000.0	1208.6
Վեդի	6	5580.0	417.4	418.3	417.9	43	43480.0	126.1	5000.0	675.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	6438.0	277.3	1004.9	641.1	76	60777.0	131.6	9090.9	1209.8
Բաղրամյան						2	2430.0	100.0	833.3	143.1
Վաղարշապատ	4	1069.0	1051.2	4697.4	3557.1	180	163984.0	197.4	26528.4	1540.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						10	10930.0	186.6	1084.3	382.2

Ճամբարակ						2	6505.0	71.3	2286.2	104.5
Մարտունի	27	17088.0	58.3	118.7	111.3	14	16396.0	119.3	5000.0	270.2
Սևան	23	49391.0	188.1	540.9	293.9	7	11835.0	240.0	3110.4	171.9
Վարդենիս	19	24447.0	378.4	378.4	378.4	4	4283.0	72.5	987.2	124.8
Լոռու մարզ										
Ալավերդի						5	5510.0	114.3	1388.9	142.0
Գուգարք	20	15262.0	32.4	5202.6	2470.8	15	20711.0	77.9	14083.3	589.7
Սպիտակ						6	7970.0	104.9	1348.3	140.3
Ստեփանավան	5	6471.0	57.5	264.0	199.2	3	6820.0	88.2	1666.7	113.9
Տաշիր						1	660.0	45.3	400.0	70.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	53	48214.0	409.0	3666.7	2134.5	185	164560.0	264.5	35353.5	2015.1
Եղվարդ	56	43344.0	1463.4	4080.0	2664.3	183	175790.8	173.6	27000.0	2139.8
Հրազդան	9	7824.0	251.3	2937.0	591.5	34	31203.0	117.7	34848.5	1342.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	52	23905.0	290.3	116666.7	3784.8	14	8962.0	113.6	18750.0	331.7
Ամասիա						1	4820.0	45.3	274.7	70.1
Անի						1	1000.0	67.9	180.6	99.2
Աշոցք						1	1490.0	40.8	144.0	58.1
Արթիկ	9	4147.0	52.5	426.0	208.9	16	13254.0	111.8	5000.0	183.9
Սյունիքի մարզ										
Գորիս	3	3750.0	152.0	178.6	163.5	3	1774.0	112.2	1700.0	250.9
Կապան	3	3000.0	115.0	115.5	115.2	1	600.0	67.9	2638.9	209.0
Մեղրի	3	1671.0	296.2	296.2	296.2	3	2843.0	68.5	632.9	130.3
Սիսիան						5	5139.0	123.5	875.0	148.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	19	20000.0	127.7	760.0	527.1	11	13330.0	96.7	7659.6	318.5
Վայք						1	1200.0	120.7	1448.3	121.7
Տավուշի մարզ										
Բերդ						2	1608.0	75.8	810.0	88.6
Իջևան	30	21982.0	80.1	2300.0	1300.3	28	28567.0	74.1	14423.1	451.0
Նոյեմբերյան						4	2970.0	125.0	1948.1	143.2

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 11 գործարքներ 8.57 հա մակերեսով, ընդ որում 1-ը` /0.08 հա/ Երևանում, 8-ը` /8.36 հա/ Շիրակի, 1-ական /0.06 հա/ Գեղարքունիքի, /0.07 հա/ Վայոց Ձորի մարզերում:

2008թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3162 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.6% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. երկրորդ եռամսյակում 2008թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 16.4%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ` 21.8%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխության շարժն ունի նվազման միտում:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 174 բնակարանների, 127 անհատական բնակելի տների, 1063 հասարակական, 151 արտադրական նշանակության օբյեկտների, 3 այգետնակների, 1597 միավոր /10117.65 հա/ հողերի և 47 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման

և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 109 վարձակալության գործարքների, այդ թվում 20 միավոր /0.20 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 62.7%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 10117.65 հա հողերից 18.84 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 10098.82 հա հողերի 46.00 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.50 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2639.11 հա, որից 2628.86 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4418.44 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	7	560.94	104	439.57
Արարատ	9	2395.00	20	233.86
Արմավիր	0	0.00	55	100.63
Գեղարքունիք	3	6.00	142	678.16
Լոռի	1	3.00	76	281.47
Կոտայք	7	724.00	25	442.40
Շիրակ	1	60.00	91	183.96
Սյունիք	4	669.30	237	1554.16
Վայոց Ձոր	2	0.20	26	38.62
Տավուշ	0	0.00	16	21.17
<b>Ընդամենը</b>	<b>34</b>	<b>4418.44</b>	<b>792</b>	<b>3974.00</b>

2008թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7830 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 18.9%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 48.2%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 27.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.1%/, առանձնատների /26.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.0%/ և հողերի /12.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3167 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 63.6%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 27.4%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 904 գործարքներ, որից 579-ը՝ Երևանում: Ընդ որում,

հիփոթեքային գրավադրման գործարքներից 67.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 22.7%-ն՝ անհատական բնակելի տների, 4.7%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.3%՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.8% այգետնակների, 0.4%-ը՝ ավտոտնակների և 2.3%-ը՝ հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 63.8%-ով, ընդ որում Երևանում՝ 67.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 57.0%-ով:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 2580.39 հա հողեր, որից 28.29 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.8% կամ 2524.84 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.02 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1676.72 հա, որից 1675.09 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 16 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2008թ. առաջին եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 14.3%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 31.4%-ով: 2008թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է 37.5% Երևանում, իսկ ցածրը՝ 4.2-ական% Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերում:

2008թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6920 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 21.0%-ով, իսկ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 15.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.1%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***